



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/Ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/Ֆ
Հեռ.՝ 055155305
Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՇՈՏ ԴԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 24.
« 16 » մարտի 2017թ.

Հարգարժան պարոն մարզպետ


Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 6-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին » թիվ 07-Ն որոշումը, որոշման ընդունման կապակցությամբ տրված տեղեկանքը, հիմնավորումը, քաղվածքը և նախահաշիվները:

Առդիր՝ 64 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնք
 ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Շահումյանի թ/ֆ
 Հեռ.՝ 055155305
 Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 մարտի 2017 թվական N07 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 40-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, « Իրավական ակտերի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 70-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին » թիվ 40-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝
 - 1) որոշման հավելվածի 1-ին կետի 2-րդ տող « 1440.0 » փոխարինել « 1884.0 » թվով.
 - 2) որոշման հավելվածի 1-ին կետի 6-րդ տողի « 24492.5 » թիվը փոխարինել « 24428.1 » թվով.
 - 3) որոշման հավելվածի 1-ին կետը լրացնել նոր տողով՝ « Վարչական գանձումներ » վերնագրով և « 180.0 » թվով.
 - 4) որոշման հավելվածի 2-րդ կետը լրացնել նոր տողով՝ « Գյուղատնտեսություն վերնագրով » վերնագրով և « 364.0 » թվով.
 - 5) որոշման հավելվածի 2-րդ կետի 6-րդ տողի « 2298.5 » թիվը փոխարինել « 1934.5 » թվով.
 - 6) որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին տողի « 18100.0 » թիվը փոխարինել « 18464.0 » թվով.
 - 7) որոշման հավելվածի 3-րդ կետի 18-րդ տողի « 2298.5 » թիվը փոխարինել « 1934.5 » թվով.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ - 4

Դեմ - 0

Ձեռնպահ - 0

1. ԳԱԼՈՅԱՆ ԱՐՄԵՆ
2. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
3. ՄԿՐՏՉՅԱՆ ՍԱՆԴՐՈ
4. ՅԱՅԼՈՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Handwritten signatures



ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ

2017 թվականի մարտի « 06 »
 գ. Շահումյանի թ/ֆ

Քաղվածք

Շահումյանի թ/Ֆ համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 06 - ի թիվ 02 հերթական նիստի
թիվ 07 -Ն որոշումից

06. 03. 2017թ.

Լսեցին- Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավարի զեկուցումը համայնքի 2017 թ. բյուջեի մեջ
փոփոխություններ կատարելու մասին:

Որոշեցին - համայնքի բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ՝ 2944.806 հազար դրամը
տեղափոխել ֆոնդային բյուջե .
2. Համայնքի ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 3377.926.3 հազար
դրամ.
3. Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 6322.732.3 հազար դրամն ուղղել՝
ա) 01 բաժին 1 խումբ 1 դաս 5122 հոդվածին 300 .0 հազ.դրամ.
բ) ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդի 5999 հոդվածին 6022.732.3 հազ.դրամ:
4. Համայնքի բյուջեի վարչական մասից դոտացիան պակասեցնել 64.4 հազար դրամով.
5. Համայնքի բյուջեի վարչական մասի << Գույքահարկ փոխադրամիջոցների համար >>
տողի թիվը ավելացնել 444.0 հազար դրամով.
6. Համայնքի բյուջեի վարչական մասի << Տեղական վճարներն >>ավելացնել 180.0 հազար
դրամով.
7. Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 2298.5 հազար դրամն
ուղղել՝
ա) 04 բաժին 2 խումբ 1 դաս 4111 հոդվածին 364.0 հազար դրամ.
բ) վարչական բյուջեի պահուստային ֆոնդի 4891 հոդվածին 1934.5 հազար դրամ:

Ավագանիներ՝ 4 կողմ

Ստորագրություններ

Իսկականի հետ ճիշտ է

Աշխատակազմի քարտուղար



L. Ղասարյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/ֆ, 055155305,
shahumyantf.armavir@mta.gov.am

16 մարտի 2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ գյուղական համայնքի ավագանու մարտի 6-ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/ֆ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին » թիվ 07-Ն որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԹՈՒՐ ՅԱՅԼՈՅԱՆ

Կտր. Աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ղատարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՇԱՀՈՒՄՅԱՆԻ Թ/Ֆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Շահումյանի թ/Ֆ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյանի թ/Ֆ
Հեռ.՝ 055155305
Էլ. փոստ՝ shahumyantf.armavir@mta.gov.am

« 16 » մարտի 2017թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ գյուղական համայնքի
ավագանու կողմից ընդունված իրավական ակտի նախագծի օրինականության և
հիմնավորվածության մասին

ՀՀ Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի ղեկավար Արթուր Յայրոյանս, ղեկավարվելով «
Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ստուգեցի ՀՀ
Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 6-
ի « Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյանի թ/Ֆ համայնքի 2016
թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու
մասին » թիվ 07-Ն որոշման օրինականությունն ու հիմնավորվածությունը: Ստուգմամբ
պարզեցի, որ տվյալ ակտի ընդունումը պայմանավորված է « Տեղական ինքնակառավարման
մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջով, և դրա
անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է համայնքի զարգացմանը
նպաստելուն՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային
գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման,
հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

ԱՐԹՈՒՐ ՅԱՅՆՈՅԱՆ

Կար. Աշխատակազմի քարտուղար՝ Լ. Ղառաբյան

